

**ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՈ ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ
(XIX դարի երկրորդ կես)**

Քուրդ ժողովրդի էթնիկական ծագմանը, պատմությանը, սոցիալ-տնտեսական հարցերին, ազգագրությանը, բանավոր գրականությանն ու լեզվին անդրադարձել են դեռևս Մեվսես Խորենացին, Փավստոս Բուզանդը, Եղիշեն, Ղազար Փարպեցին և հայ մտավորականության շատ այլ ներկայացուցիչներ: Նրանք հատկապես զրել են քրդերի նախնիների՝ մարերի մասին:

Մական հետազայում, ինչպես վկայում են հայկական բազմաթիվ գրավոր աղբյուրներ, հայ մտավորականության առանձին լայնախոհ ներկայացուցիչներ ջանացել են մոտիկից զբաղվել քուրդ ժողովրդի մշակույթի, հատկապես բանահյուսության խնդրով, խորամուխ լինել նրա պատմական անցյալի անցքերում: Մ.Մաշադի անվան մատենադարանում պահպանված մի շարք նյութեր վկայում են, որ հայ մտավորականության ներկայացուցիչները դեռ շատ հնուց ուսումնասիրել են քուրդ ժողովրդի պատմությունը, բանահյուսությունը, ազգագրությունը, լեզվի հետ կապված հարցերը:

Մական քրդական մշակույթի նկատմամբ հայ մտավորականության հետաքրքրությունը առավելապես աչքի է զարնում XIX դարի կեսերից, երբ հայ միտքն իր նոր վերելքն էր ապրում:

Հայ-քրդական մշակութային կապերի ամեն մի ուսումնասիրող կարող է շեշտել, որ քրդասեր հայ մտավորականների առավել երախտավորների շարքում բացառիկ տեղ է զրավում հայ նոր գրականության հիմնադիր, մեծ վիպասան, մանկավարժ ու լուսավորիչ Խաչատուր Աբովյանը:

Մեծ ու անգնահատելի է Խ. Աբովյանի դերը քրդական մշակույթի ուսումնասիրության մարզում: Նրա յուրաքանչյուր ուսումնասիրություն այդ բնագավառում կարելի է համարել սկզբնաղբյուր քրդագիտության մեջ: Նա ուշագրավ մտքեր է հայտնել քուրդ ժողովրդի բանահյուսության ու ազգագրության, լեզվի ու գրականության վերաբերյալ, ցույց է ավել այդ ժողովրդին

բնորոշ մտածելակերպը, ազգային հոգեբանությունը: Ուսումնասիրելով իր ժամանակի պատմության սկզբնաղբյուրները՝ Աբովյանն իր «Քրդեր և եզդիներ» երկում օգտագործել է հայ և եվրոպական գրականությունը, որոնել տվյալ ժամանակի՝ հասարակական-քաղաքական դեպքերի աչքի ընկնող մասնակիցներին ու ականատեսներին և նրանց պատմածներից քաղել անհրաժեշտ տեղեկություններ¹:

Գերմանական ճանապարհորդներ Ֆրիդրիխ Պարրոտաի, Կարլ Կոխի, Ֆրիդրիխ Բոդենշտեդի, Մորիս Վազնիերի, Ավգուստ Ֆոն Հակտհաուզենի և մյուսների հետ, հատուկ հանձնարարությամբ, որպես ուղեկցող և թարգմանիչ՝ Աբովյանը շրջագայել է Արարատյան դաշտավայրում, ծանոթացել նրանց ինչպես հայ, այնպես էլ քուրդ ժողովրդի կենցաղին: Աբովյանի շնորհիվ է, որ վերոհիշյալ ճանապարհորդներն իրենց աշխատություններում, անդրադառնալով Հայաստանին ու հայ ժողովրդին, միաժամանակ անդրադարձել են նաև քուրդ ժողովրդի պատմությանը, ազգագրությանը, բանահյուսությանը և այլ հարցերի:

Խ. Աբովյանի «Քրդեր և եզդիներ» աշխատանքը գիտական մի խոշոր ներդրում էր քրդական մշակութային կյանքում, որտեղ հանդիպում ենք մի շարք հարցերի լուսաբանմանն ու լուծմանը:

Գիտական խոր վերլուծության ենթարկելով քուրդ-եզդիական խնդիրը, նա հանգում է այն ճիշտ եզրակացության, որ նրանք էթնիկական ստումով մեկ ժողովուրդ են՝ քրդեր են, տարբեր դավանանքներով, իսկ եզդիզմը պաշտամունք է:

Հայ մեծ լուսավորիչը վեր է հանել այն անկեղծ, անմիջական ու պարզ բարեկամական կապերը, որ ունեին քրդերը հայ ժողովրդի հետ: Նա իր ուսումնասիրություններում անդրադարձել է հայ-քրդական զինակցական կապերին, նրանց համատեղ ազգային-ազատագրական շարժումներին: Նա գրել է. «Իրենց հարևան ազգերից ոչ մեկի հետ նրանք (քրդերը - Կ. Չ.) այնպես սերտ չեն կապված, այնպես համատեղ չեն գործում, ինչպես հայերի, որոնց նրանք անվանում էին եղբայրներ»:²

Քուրդ ժողովրդի խոսքարկետը, բանավոր ստեղծագործությունների խորիմաստությունը հիացրել են Աբովյանին, մեծ տպավորություն գործել նրա վրա: Նրա համոզմամբ, քուրդ ժողովուրդն օժտված է ստեղծագործական կարողություններով, վառ երևակայությամբ, ունի հարուստ բանահյուսություն:

Անդրադառնալով քրդական ժողովրդական բանահյուսությանը՝ Աբովյանը կարողացավ վեր հանել քուրդ ժողովրդի ինքնությունը մտածելու ունակությունը: Նա հայ լայնախոհ մտավորականներից առաջինն էր, որ հավաքեց ու գրի առավ քրդական ժողովրդական բանահյուսության մի քանի նմուշներ, որոնք հրատարակվեցին գերմաներեն, ապա Երվանդ Շահազիզի, հետագայում Արամ Դանալանյանի ջանքերով լույս տեսան նաև հայերեն ու քրդերեն:

«Քրդերի ժողովրդական պոեզիան, - գրել է Աբովյանը, - ապշեցուցիչ ընթացք է ունեցել և հասել հնարավոր կատարելության: Ամեն մի քուրդ, մինչև

խկ քրդուհի ի ռնն հոգով բանաստեղծ է, նրանք ամենքն էլ իմպրովիզացիայի գարմանայի շնորհք ունեն»³:

Արթվյանը հիացմունքով է խոսում ազնիվ ու պարզ քուրդ ժողովրդի բարքերի, հատկապես հյուրասիրության մասին: Նա գրում է. «Այդ ժողովրդի հյուրասիրությունը ամբողջ արևելքում ամասպել է դարձել: Մինչև իսկ նրանց դեմ այնպես թշնամաբար տրամադրված թուրքերն ու պարսիկները պետք է... խոստովանեն նրանց այդ անավելությունները»⁴:

Ամենակարևորն այն է, որ մեծ լուսավորիչն իր ուսումնասիրություններում պարզ ու հստակ ցույց է տվել, որ հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունն ու մշակութային կապերն ունեն դարերի պատմություն, այդ բարեկամությունը ձեռք է բերվել սոցիալական և ազգային պայքարի բովում, այն չունի շահադիտական որևէ նպատակ:

Մտավորականության պայծառ դեմքերից մեկը՝ Տիգրանակերտի վանահայր Սկրտիչ Տիգրանյանը, ոչ միայն լուսավորչական լայն աշխատանք է կատարել քրդերի շրջանում, կազմել հայատառ քրդերենի այբբենարանը, այլև իր յուրաքանչյուր աշխատությունում անդրադարձել է քրդական մշակույթի հարցերին, զբաղվել քուրդ ժողովրդի պատմության, ազգագրության, բանահյուսության և լեզվի հարցերով:

1841թ. Տիգրանյանը կազմում է մի ծրագիր, որը կոչվում էր «Կանոնք բարեկարգութեան Քյուրդիստան և Հայաստանի վանորէին և վիճակաց նոցին»⁵: Ինչպես վերնագրից է երևում, հեղինակը նպատակ է ունեցել Քուրդիստանում ևս բարենորոգումներ կատարելու, քրդերի մշակութայն զբաղվելու և լուսավորություն տարածելով նրանց մեջ՝ փրկելու թուրքական սադրոստայնից: Նա երագել է Հայաստանը և Քուրդիստանը տեսնել որպես լուսավորված երկրներ: Նա գրել է. «Երանի այնմ ավուր, որ Քուրդիստան և Հայաստան կատարել ինքզինքը փառավոր գիտութեան և իմաստութեան լուսին մեջ ըլլար». «Խօզի ըրօյն հան քի Քյուրդիստան ու Յիլստան թագմիլ հրն պըսլըն պը իլմաթն ըռոնի»⁶:

Մակայն շուտով սկսվում է ռուս-թուրքական պատերազմը, և 1854թ. Թուրքիայում բռնկվում է Եզդանիշիքի ազատագրական պայքարը Թուրքիայի դեմ: Բնականաբար, երկրի ներքին խստը վիճակը տվյալ պահին թույլ չէր տալիս Տիգրանյանին իրագործելու իր վաղեմի նպատակը, բայց նա չի հրաժարվում իր նախաձեռնությունից: Վերջապես, 1860 թ., քրդախոս հայերի ու քուրդ երեխաների համար հրատարակվում է «Այբբենարան քրդերեն ու հայերեն» (Ալիֆայենձեղ գուրմանչի ու արմանի) դասագիրքը՝ կազմված հայկական տառերի հիման վրա, հարմարեցված քրդերենի հնչյունաբանությանը:

Տիգրանյանն ուներ հեռահար նպատակներ, հայ և քուրդ ժողովուրդների փրկությունը նա տեսնում էր նրանց համերաշխության, միասնական պայքարի և լուսավորության ուղու վրա համատեղ ընթացքի մեջ: Մակայն հեղինակը լավ էր գիտակցում, որ մենակ դժվար է այդ ծրագիրն իրագործել, ուս-

տի ե որոշում է համագործակցել առաջադեմ հայ մտավորականների հետ, բացատրել նրանց իր ծրագրի էությունը, նրանցից խնդրել օգնություն և միասնական ջանքերի գործադրում այդ ուղղությամբ: Նրա ջանքերը հանգեցնում են շշափելի արդյունքների:

1860թ. Կ.Պոլսում կազմակերպվում է «Բարեկարգություն արևելյան» անունով մի ընկերություն, որի նախագահին էր Մ.Մանյանը՝ գործակցությամբ «Մեղվի» խմբագիր Հարություն Ավանյանի՝

Ընկերության անդամների անմիջական աջակցությամբ Տիգրանյանը ինչպես քրդախոս հայերի, այնպես էլ քուրդ երեխաների համար հրատարակում է իր հայատառ հաջորդ գրքույկը՝ «Չրայե ըօնի» («Լապտեր լուսատու»): Այս գրքի առաջին էջի վրա հայերենով գրված էր. «Լապտեր լուսատու, հորինյալ ի տեր Սկրտիչ վարդապետե Տիգրանյան, առաջնորդ Քուրդիստանի, լույս ընծայեցավ Կոստանդնուպոլիս 1866թ.»։ Երկրորդ էջի վրա հայատառ քրդերենով գրված է. «Չըրայե ըօնի հատ չեգընեմ Ժը Սկրտիչ Տիգրանե Մըթան Մալախասե Քուրդիստան, պասմա պու լը Ըստամպուլե, 1866»:

Գրքի յուրաքանչյուր էջի վրա տեքստը գրված էր հայերեն, դիմացը քրդերեն կուրմանջի բարբառով տրված էր թարգմանությունը: Այսպիսով, հայ մտավորականն իր բառապաշարով, գեղարվեստական մտքի ճկունությամբ հարստացնում է քրդական գրական լեզուն:

Մ. Տիգրանյանն այն հայ մեծ լուսավորիչներից էր, որոնք հայ-քրդական մշակութային կապերի պատմության մեջ թողել են անջնջելի հետք:

Հայ հասարակական մտքի 19-րդ դարի ականավոր ներկայացուցիչներից մեկը՝ «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունին, իր թերթի էջերում հաճախակի լուսաբանում էր քուրդ ժողովրդի պատմության, բանահյուսության և ազգագրության հետ կապված հարցեր և ինքն էլ հանդես գալիս մի շարք հոդվածներով ու նաև առանձին գրքույկով, որոնք հետաքրքիր երևույթ են հայ-քրդական մշակութային կապերի պատմության մեջ:

Քրդական մշակույթի մասին գրած իր առաջին իսկ հոդվածում, որը վերնագրել է «Առաջին քայերը», Արծրունին կոչ է անում հայ մտավորականությանն ուսումնասիրել հարևան ու բարեկամ քուրդ ժողովրդի անցյալը և հնարավոր բոլոր միջոցները օգտագործել՝ ստեղծելու և ամրապնդելու հայ-քրդական բարեկամական կապերը: Հետագայում իր մի շարք հոդվածներում նա անդրադառնում է նաև քուրդ ժողովրդի պատմության որոշ հարցերի: Հայ հրապարակախոսը նշում է, որ երկու ժողովուրդների ճակատագիր համանման է, որ հարկավոր է խորապես ուսումնասիրել քրդերի սոցիալ-տնտեսական վիճակը և ջանքեր գործադրել նրանց հետ համագործակցելու:

Արծրունին իր թերթի միջոցով բարձրացնում էր քրդերի մեջ լուսավորություն տարածելու հարցը: Նա հաճախ էր անդրադառնում Արևմտյան Հայաստանի քրդախոս հայերի ու քրդերի ուսուցման խնդրին: Թերթի համարներից մեկում կարդում ենք, թե ինչպես Տարոնում, Սասունում, Շատախում, Դիարբեքլիում հայերն ու քրդերը ապրում էին կողք կողքի՝ միևնույն սոցիալ-

տնտեսական պայմաններում, սերտ բարեկամական կապերով: Բերված է մի ուշագրավ փաստ, թե ինչպես երեխաների համար առաջին անգամ 1878թ. Խակի գյուղում (Բաղեշի և Սդերտի միջև), բացվում է դպրոց, ուր հաճախում էին 500 երեխաներ⁹:

Ինչպես Գ. Արծրունու, այնպես էլ «Մշակի» մյուս խմբագիրների՝ Ա. Զալանթարի, Հ. Առաքելյանի և այլոց օրոք թերթում քրդերի մասին տպագրվել է ավելի քան 300 հոդված ու թղթակցություն:

Հայ քրդագիտության մեջ մեծ է պրոֆեսոր Ս. Ա. Եղիազարովի դերը: Նրա «Համատեղ ազգագրական ակնարկ Երևանի մահաճգի քրդերի մասին», ռուսերեն արժեքավոր աշխատությունը մի նոր ներդրում էր հայ-քրդական մշակութային կապերի պատմության մեջ¹⁰:

Եղիազարովի այդ ուսումնասիրությունը համարվում է քրդերի պատմության մասին ազգագրությանը նվիրված առավել լուրջ գիտական գործերից մեկը, որն, ինչպես հայ մտավորականների, այնպես էլ մասսայական ընթերցողների շրջանում լայն հետաքրքրություն է հարուցում քուրդ ժողովրդի ու նրա մշակույթի հանդեպ:

Ստորմոմ Եղիազարովը՝ ծնված Դավալու գյուղում (ներկայիս՝ Արարատ), իր մանկությունն անց է կացրել հարևան քրդերի շրջանում, տիրապետել քրդերենին, հետագայում զբաղվել է քրդական ժողովրդական բանահյուսությամբ, հավաքել ու գրի ստել նրա լավագույն նմուշները, որոնք և լայնորեն օգտագործել է իր վերոհիշյալ աշխատությունում: Այս գրքով մա նպատակ է ունեցել ռուս ընթերցողներին ներկայացնելու քուրդ ժողովրդի ոչ միայն հոգեկան պարզ ու լայն աշխարհը, այլև նրա կյանքը, նրան բնորոշ խոր ու պարզունակ մտածողությունը: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ դեռևս Հայաստանում եղած ժամանակ, մա ճանաչված է եղել որպես քուրդ ժողովրդի մշակույթի ջատագով, հմուտ քրդագետ: Նա սերտ հարաբերության մեջ է եղել ուկրաինական նշանավոր բանաստեղծ Ալեքսանդր Նավրոսկու հետ, որը 14 տարի (1870-1884թթ.) եղել է Երևանում, ծանոթացել ինչպես հայերի, այնպես էլ Հայաստանում բնակվող այլ ազգերի կենցաղին, սովորույթներին, բանահյուսությանը: Նրան առավել հետաքրքրել են քուրդ ժողովրդի նիստ ու կացը, կենցաղը, պաշտամունքը, հատկապես բանահյուսությունը. այս ամենն ուսումնասիրելու խնդրում Նավրոսկուն օգնում է Ա. Եղիազարովը, տրամադրելով բազմաթիվ նյութեր: Այնուհետև Նավրոսկու խնդրանքով Եղիազարովը տասը քրդական երգեր քրդերենից թարգմանում է ռուսերեն և հանձնում նրան¹¹:

Ազատ տիրապետելով քրդերենին՝ Եղիազարովը կազմել է նաև ռուս-քրդերեն և քուրդ-ռուսերեն բառարան: Հետագայում, երբ իր աշխատությունը 1891թ. վերահրատարակվել է «Ռուսական կայսերական աշխարհագրական ընկերության Կովկասյան բաժանմունքի տեղեկագրերի» 13-րդ գրքում, բառարանները զետեղել է այնտեղ, տպագրելով նաև «Ակնարկ Թուրքիայի եզդիների մասին» ծավալուն ուսումնասիրությունը, որտեղ հանգում է այն

եզրակացության, որ քրդերը և եզդիները էթնիկական մեկ ծագում ունեն: Զրդերին քաջատեղյակ Ս. Շդիազարովը ջանացել է նաև կազմել քրդական այբուբեն: Այդ հարցով 1980-ական թվականներին նրան է դիմել Արևելյան Հայաստանի քուրդ-եզդիների առաջնորդ Հասան աղան, որ ցանկանում էր հայ մտավորականության օգնությամբ քուրդ-եզդիների համար դպրոցներ բանալ: Այդ խնդրանքը Շդիազարովն ընդունում է ջերմությամբ և պատրաստակամությամբ է հայտնում կազմելու քրդական այբուբեն: Նա վաղուց արդեն ստեղծել էր ինչպես լատինատառ, այնպես էլ ռուսատառ քրդերեն այբուբենը, որ գետեղել էր հենց իր բառարաններում: Սա ևս ցույց է տալիս հայ երախտաշատ քրդագետի մեծ ու շնորհակալ ծառայությունը քուրդ ժողովրդին:

19-րդ դարի արևմտահայ հասարակական մտքի ականավոր ներկայացուցիչներից մեկը՝ Մաթևոս Մամուրյանը, իր աշխատություններում, հոդվածներում և գեղարվեստական ստեղծագործություններում (հատկապես «Հայկական նամականի»-ում և «Ան լիտան մարդը» պատմավեպում) անդրադարձել է քուրդ ժողովրդի սոցիալ-տնտեսական ծանր վիճակին, քրդական հարցում թուրքական կառավարության և եվրոպական տերությունների դիրքորոշմանը և այլ հարցերի: Նա ևս իր հոդվածներում հայ մտավորականության առաջ հարց էր բարձրացնում լուսավորություն տարածել քրդերի մեջ, գտնում էր, որ երկկողմանի բարեկամությունը կհասցնի ինչպես հայ, այնպես էլ քուրդ ժողովրդի իղձերի ու նպատակների իրականացմանը:

Խրիմյան Հայրիկը 19-րդ դարի այն լայնախոհ հայ մտավորականներից էր, որոնք ջանում էին լուսավորություն սերմանել քրդերի շրջանում, զբաղվել նրանց մշակութային հարցերով: Գարեգին Սրվանձտյանի հետ նա ջանք չի խնայել ամրապնդելու հայ-քրդական համագործակցությունը: Իր գործունեության առաջին իսկ շրջանից, Կոստանդնուպոլսի պատրիարքի պաշտոնը ստանձնելուց հետո, Հայրիկը բազմաթիվ փաստերով թուրքական կառավարությանն է ներկայացնում ինչպես հայ, այնպես էլ քուրդ ռամիկ ժողովրդի ծանր վիճակը: Համակրելով քուրդ ժողովրդին՝ 1880թ. նա հատուկ հանձնարարություն է սուլիս Հայաստանի սովյալների հանձնաժողովի նախագահությանը, ցորեն, հաց և դրամ բաշխել քրդերին, որպեսզի քուրդ ժողովուրդը ևս սովից չկուտորվի¹²: Խրիմյան հայրիկը բազմիցս այլ միջոցառումներ է ձեռնարկել օգնելու քուրդ սովյալներին, նա նույնիսկ իրեն հասանելի գումարը հաճախ հատկացրել է նրանց, փրկելով հարյուրավոր քուրդ սովյալների կյանքը¹³:

Խրիմյան Հայրիկը աջակցել է այն հայ մտավորականներին, որոնք զբաղվում էին քուրդ ժողովրդի մշակութային հարցերով: Նրա մտադրություններն այդ ուղղությամբ առավելապես արտահայտված են 1880թ. Գ.Նորատուռնկյանի և Գ.Սրվանձտյանի միջև փոխանակված նամակներում: Նա միաժամանակ կապեր է հաստատել քուրդ աշիրեթապետների ու մտավորականների հետ, ջանալով նրանց աջակցությամբ հայ մտավորականության միջոցով լուսավորություն տարածել քրդերի շրջանում: Եվ պատահական չէ

հանրահայտ այն իրողությունը, որ քրդերը հատուկ հարգանք ունեին հայ հոգևորականության, առավել ևս Խրիմյան Հայրիկի նկատմամբ, որին իրավամբ անվանում էին միլիաքյատ (սուրբ մարդ):

Հայ ճանաչված մտավորական Երվանդ Լալայանը շատ է մտահոգվել քրդական հարցերով: Նա մեծ նշանակություն է տվել քրդական ժողովրդական բանահյուսությանը, հավաքել քրդական հեքիաթներ, երգեր, վիպագրեր: Նա բազմիցս եղել է Մոկսի, Սասունի, Բիթլիսի, Վանի շրջաններում, մասնակցել ծիսակատարությունների, հարսանիքների և ինչպես քուրդ, այնպես էլ հայ բանահավաքներից զրի ստել քրդական բանահյուսության և ազգագրական նյութերի լավագույն նմուշները, որոնք հետագայում տպագրել է հայկական պարբերական մամուլում:

Հայտնի է, որ ինչպես հայկական, այնպես էլ քրդական բանահյուսության բազմաթիվ նմուշներ հավասարապես հարազատ են եղել երկու ժողովուրդներին և երկու լեզվով էլ տարածված են եղել նրանց մեջ: Լալայանին քերևս հետաքրքրել է այդ իրողությունը և, պատահական չէ, որ նա փնտրել է այդ նմուշները, զրի ստել, որոշ դեպքերում՝ քարգմանել, իսկ որոշ դեպքերում էլ բանասացներից լսած ձևով տպագրել:

1882թ. նա քրդերից լսում է «Թմկաբերդի առումը» և այն զրի առնում ու հենց նույն ֆակախին տպագրում է իր «Ջավախիքի բուրնունք» գրքում: Նա քրդերից լսել և զրի է առել նաև «Ուստում Ջալի» պատմությունը և նրա քրդական տարբերակը հետագայում տպագրել իր «Վասպուրական» գրքում:

Լալայանը վկայել է, որ Վանի, Սասունի, Բիթլիսի հայերը հոյակապ տիրապետում էին քրդերենին, նրանցից շատերը ինչպես քրդական, այնպես էլ հայկական բանահյուսության նմուշները պատմում էին հենց քրդերենով: Այդ երկու ժողովուրդները սերտ հարաբերությունների մեջ էին, փոխադարձաբար մասնակցում էին միմյանց ծիսակատարություններին, ուրախություններին ու սուգերին¹⁴:

Քրդական մշակույթի նկատմամբ Ե.Լալայանի տածած հետաքրքրությունն ավելի ակնհայտ դրսևորվում է այն ժամանակվանից, երբ նա հիմնադրում է «Ազգագրական հանդես» պարբերականը (1896): Հանդեսի տարբեր համարներում տեղ են գտնում նաև քուրդ ժողովրդի պատմությանը, բանահյուսությանն ու ազգագրությանը վերաբերող նյութեր:

Հայ երաժշտագետները նույնպես զբաղվել են քրդական երաժշտությամբ: Կարա-Մուրզան և Կոմիտասը 19-րդ դարի վերջին ոչ միայն զննատել են քրդական երգարվեստն ու երաժշտությունը, այլ ուղղակի զբաղվել դրա հավաքմամբ, գրսամամբ ու մշակմամբ: Այսպես, Բրիտտափոր Կարա-Մուրզան քրդական երաժշտության պատմության մեջ հայտնի է իր մշակած «Քրդերու մարշը» և «Կոմը վոչին» երգերով: Բոստոնում հրատարակվող «Պայքար» թերթը, անդրադառնալով քրդական երաժշտության բնագավառում Կարա-Մուրզայի ծառայություններին, գրում է. «Զ.Կարա-Մուրզան եղած է քրդական երգարվեստի առաջին բանահավաք մշակողներեն մեկը»¹⁵:

Սակայն պետք է պարզորոշ ասել, որ հանճարեղ Կոմիտասը առաջինն էր, որ հիմք դրեց քրդական մշակված, նուստագրված երաժշտությանը: Կոմիտասը լուվ գիտեր քրդերին: Նա եղել է քրդական հարսանիքներում, մասնակցել ուրախություններին, լսել քրդական ասքերն ու դրանցից քաղել քրդական երաժշտության լավագույն նմուշները: Ջերմ կապեր է ունեցել Ռոստոք բեկի հետ, եղել է Շամիրամ գյուղում: 1899թ. Բեռլինում Կոմիտասը հանդես է գալիս քրդական երաժշտությանը նվիրված իր ուսումնասիրությամբ, որը համարվում է նրա դիպլոմային աշխատանքը և ընդունվում է ջերմությամբ: Նա կարողացավ հերքել եվրոպական երաժիշտների այն բյուր կարծիքը, թե քրդական երաժշտությունն իբր պարսկական և արաբական երաժշտության խառնուրդ է ու հաստատել, որ այն իսկական երգ ու երաժշտություն սիրող ժողովրդի մեջ հույսն ու պատմությունն արտացոլող երաժշտություն է, որ այն ունի ազգային ինքնատիպություն: Մեզ են հասել Կոմիտասի ծայնագրված 13 քրդական մեղեդիներ և որոշ արխիվային նյութեր¹⁶:

Ամփոփելով պետք է նշենք, որ սոցիալ-տնտեսական միջավայրի և ստաջադրանքների, հասարակական-քաղաքական և մշակութային իդեալների ընդհանրությունը այն կենարար հողն է, որի վրա պիտի առավել զարգանան անցյալ դարերի համատեղ ոգորումներում արմատավորված հայ և քուրդ ժողավուրդների բարեկամական վտխահարաբերությունները:

SUMMARY

The paper deals with the progressive role of the Armenian intelligency in the development of Kurdish culture during the second half of the XIX century.

Many Armenian scholars, literators, clergymen were involved in the study of the Kurdish history, ethnography, Armenian-Kurdish relations. Among them the author distinguishes Kh.Abovian, M.Tigranian, M.Momjian, G.Artsrouni, M.Mamourian, M.Khrimian, etc. Due to their efforts had appeared fundamental studies devoted to the Kurdish history, language, poetry, music.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արովյան, Երկերի ժող., հ.8., 1958, էջ 260:
2. Խ.Արովյան, հ.8. Ե., էջ 260:
3. Նույն տեղում, էջ 377:
4. Նույն տեղում, էջ 257:
5. Հայելի գործոց և աշխատությանց, Սյրտիչ վարդապետ Տիգրանյան, Կ.Պոլիս, 1864, էջ 9:
6. Լապտերի լուսատու յորինեալ ի տեր Սյրտիչ վարդապետ Տիգրանյան, Կոստանդնուպոլիս. 1866, էջ 19:
7. Մ.Նալբանդյան, Անտիպ երկեր Ա.Հովհաննիսյանի կոմենտարիաներով, Երևան-Մոսկվա, 1953, էջ 465:
8. «Մշակ» 1881, հ. 34, էջ 103:
9. Նույն տեղում, էջ 23-24:
10. С.А. Егiazаров, Краткий этнографический очерк Эриванской губернии, Т. 1884.
11. Журнал "Наш минуел", Киев, 1918, N1.
12. Ա.Թերզիրաշյան, «Արծիվը իր բույնի մեջ», Փարիզ, 1938, էջ 40:
13. Նույն տեղում:
14. Ե.Լալայան, «Վասպուրական», Թիֆլիս, 1912, էջ 201:
15. «Պայքար», Բոստոն, 1971, հ.264:
16. Ս.Գ.Գասպարյան, Կոմիտաս, Ե., 1961, էջ 180: